

ՀԱՍՄԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈՄՍՈՒՐՃՅԱՆԻ ՄԻ ԱՆՏԻՊ ՊՈԵՄԸ

379

Մատենադարանի № № 8780 և 7715 ձեռագրերում պահպանվել է XVII դարի նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ և գրող Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Կասն էքմէրճի աւնաւուտ Տիմոչի ումեմն, որ սիրեաց զաղջիկ մի հրէի Մրգատայ անուն և սուրբ խորհրդով քարոզէ նմա պժրիստոս և աղջիկն խոստանայ երթալ ընդ նմա և կամեցի մանուկ» խորադրով երկը¹, որն իր գրական հատկանիշներով մոտենում է պոեմի ժանրին:

Սա դավանանքով քրիստոնյա, ազգով ալբանացի մի հացավաճառի և մի հրեա աղջկա սիրո պատմութիւնն է, ըստ երևույթին իրական դեպքի դեղարվեստական վերարտադրութիւն:

Հիմնական սյուժետային գծի աւտակետից այս երկն ակնհայտորեն սուրնչվում է մեր միջնադարում շատ տարածված ու բազմիցս մշակված «Հոհաննէս և Աշա» պոեմի և համանման սյուժե ունեցող արձակ գրույցների հետ: Այստեղ ևս, ինչպէս նշված երկերում, առաջ է քաշվում այլադավան երիտասարդների միջև սիրո հնարավորութեան և, հակառակ կրօնական արգելքների, այդ սիրո հաղթանակի հարցը:

Պոեմի սկզբնական մասը հիմնականում նվիրված է սիրո անհաղթ ուժին: Այստեղ մանրամասն նկարագրվում է հերոսների հոգեկան ներաշխարհը, այն ջերմ, լիրիկական զգացումը, որ համակում է նրանց և ուղենիշ դառնում հեռագա գործունեության համար: Ահա թե ինչ է ասում պոեմի հերոսն իր սիրո հզորութեան մասին.

Ի սէր սիրական սիրտ իմ պըրկեալ է,
Որ այժմ և աւէտ ոչ որ լըուեալ է,

Ազուոր պաակեր է, որ մարդ աւսեալ չէ,
Քաղցրը լեզու է, որ լսելոյ չէ,
Բարք նազելի է, որ ասելոյ չէ,
Սէրն է հանց հաղթող, որ պատմելոյ չէ:
Թէ յաշս համայնից, որ դարչ հրէա է,
Չգիտեմ թէ ինձ որ այսպէս երևեալ է,
Չգիտեմ թէ որպիսի հուր ինձ վառեալ է,
Առանց շուան ՚ւ երկաթ դիս պինդ կապեալ է:
Ո՞րպէս կարացից մեկնիլ ի նմանէ,

¹ Չեռագիր № 8780, ժամանակ XIX դար, թերթ 17բ—30ա:

Չեռագիր № 7715, ժամանակ 1680 թ., թերթ 67բ—77բ:

Պոեմը հիշատակվել է Ա. Բաղդասարյանի հոդվածում (տես «Բաղմավեղ», 1897, էջ 424):

Ո՞րպէս գատեցայց զնորայն տեսննէ,
 Ո՞րպոն մոռացայց զսէրն, որ անհան է,
 Որ հառելոյ չէ, ոչ պատմելոյ է:

Այս և նման հատվածները, որոնցում սեպտիստորեն պատկերված են մարդկային խոր զգացումներ, հոգեկան բարդ ու նրբին ապրումներ, երկը կապում են մեր միջնադարի հումանիստական պոեզիայի լավագույն տրագիցիաների հետ: Իհարկե, թերևս, Քյոմուրճյանի երկում սիրո զգացումն արտացոլված է ոչ այն շքեղ պատկերավորութեամբ, որ հանդիպում ենք մեր տաղերգուների լավագույն սիրային երգերում ու «Հովհաննէս և Աշա» պոեմի մի շարք տարբերակներում, բայց շպետ է մոռանալ, որ Քյոմուրճյանի երկը զուտ սիրային բանաստեղծութուն չէ և, ինչպես կտեսնենք, հետապնդում է լուրջ քաղաքական նպատակ: Մյուս կողմից, «Հովհաննէս և Աշա» պոեմն անցել է բազմաթիվ տաղանդավոր երգիչների մշակման բովով, մինչդեռ Քյոմուրճյանի պոեմն անհատական ստեղծագործութուն է:

Չնայած այդ պակասին, այս հարցում պոեմը չի կորցրել իր արժեքը, քանի որ միջնադարյան պոեզիայի առաջադիմական-սեպտիստական ավանդույթների օգտագործմամբ արտացոլում է ժամանակի իրականության համար շատ տիպական մի երևույթ:

Բայց ասացինք, որ պոեմում հեղինակը հետապնդել է նաև ուրիշ, շատ կարևոր, նպատակ:

Հայտնի է, որ Քյոմուրճյանի և ժամանակի արևմտահայ ուրիշ առաջադեմ մտածողների համար ամենակարևոր խնդիրը պայքարն է եղել օսմանյան բռնապետության ազգահալած քաղաքականության դեմ, որ վարում էր օսմանյան կառավարությունը հպատակ ժողովուրդների, այդ թվում և հայերի, նկատմամբ, կանգ չառնելով մահմեդականությունը պարտադրելու, բռնի հավատափոխության ու նման միջոցների առջև:

Նվ ահա, հնարավորութունը շունենալով ազատորեն պայքարելու մահմեդականության էքսպանսիայի, իսկ առավել ևս օսմանյան բռնության դեմ, Քյոմուրճյանն ու նրա նման մտածող մարդիկ դիմում էին պարտուղի ճանապարհների: Այդպիսի ճանապարհներից մեկը բրիտանական կրոնի ջատագովումն ու դրվատումն էր, հակառակ մյուս բոլոր կրոնների նրա «առավելությունների» ու «բարձրության» ցուցադրումը: Բրիտանական պրոպագանդան, նրա անադարտության պահպանման ձգտումն, այսպիսով, փաստորեն, նրանց ձեռքին միջոց էր, որով նրանք աշխատում էին պայքարել հանուն հայերի ազգային ինքնության պահպանման: Այս նպատակն է թաքնված Քյոմուրճյանի այս պոեմում, ինչպես նաև մի շարք այլ երկերում²:

Այս նույն նպատակով է, որ հավատքի հարցում Քյոմուրճյանը պոեմի հերոսին օժտել է մի առանձին հաստատակամութեամբ, մինչդեռ հրեա հերոսուհուն դուրս է բերել ավելի մեղմ ու գյուրարեկ: Եթե հրեա աղջիկը միայն հարազատների վրեժից վախենալու պատճառով է հեռաձգում իր փախուստը և

2 Օրինակ «Յաղագս Գերուքրիստոսին, որ Կելտի-կելտի առի, արարեալ և շարադրեալ Երեմիա գարի Կոստանդնուպոլսեցոյ, որ էր ժամանակակից և տեսող իրացն ՌՃԺԷ թուշ» խորագրով երկարաշունչ բանաստեղծությունը: (ՏԵՍ Մատենադարան, ձեռագիր № 7880, թիւթ 3ա—16բ): Սա հրատարակված է Պոլսում, բայց հրատարակությունը մեր ձեռքի տակ չի եղել:

ընավ չի առարկում սիրած տղայի արած հավատախախտության առաջարկին, ապա, դրան հակառակ, քրիստոնյա երիտասարդի ներքին հոգեկան խռովքը, հրեա աղջիկ սիրելու կադակցութեամբ նրա ծանր ասլուքներն այնպես են նկարագրված, որ ընթերցողի համար պարզ դառնա, թե նա կմեռնի, բայց չի հրաժարվի իր հավատից և, ավելին, ամեն ինչ կանի սիրած էակին իր հավատքին բերելու համար:

Այս մոմենտն զգալիորեն տարբերում է Քյումուրճյանի երկը «Հովհաննէս և Աշա» պոեմից ու համանունն զրույցներից:

Պոեմի հետ թեթևակի ծանոթանալիս իսկ զժվար չէ նկատել, որ երկն իր մեջ հակահրեական միտում չունի: Այդ երևում է բազմաթիվ հատվածներից, որոնցում հեղինակը համակրանքով է խոսում հրեաների մասին, մերժելով նրանց հավատը, միաժամանակ արամութեամբ է նկարագրում նրանց անելանելի վիճակը օսմանյան բռնապետության լծի տակ:

Պոեմի հրեա հերոսները ներկայացված են դրական մարդկային գծերով: Երկի ամենահամակրելի կերպարը, թերևս, հրեա աղջիկն է՝ Մրգատան, որը գեղեցիկ է, «քաղցրախոս», «նազելի», ազնվորեն նվիրված սիրած տղամարդուն, ունակ զոհաբերության:

Մրգատայի մոր մեջ ևս Քյումուրճյանն առաջին հերթին մարդն է տեսնում և սրտառուչ տողերով է նկարագրում որդեկորույս մոր վիշտը: Ավելին, այդ վիշտը նկարագրելիս, հեղինակը կարծես մի պահ մոռանում է, որ քրիստոնյա երիտասարդն է դրա պատճառը և անսքող համակրանքով ու կարեկցանքով է նկարում մոր տառապանքի պատկերը:

Նույնիսկ Տիմոյի դեմ վկայություն տվող հրեա վաճառականներին, որոնց թուրք պաշտոնյաները հանիրավի բանտարկում են, Քյումուրճյանը չի մեղադրում ու համակրանքով է խոսում նրանց մասին:

Եվ կարևորն այն է, որ թե այս, թե հրեաներին նվիրված իր մի քանի այլ ստեղծագործություններում³, Քյումուրճյանն անց է կացնում այն միտքը, թե հրեաները դժբախտ են, որովհետև ապրում են օսմանյան Թուրքիայի լծի տակ: Մրգատայի մայրը՝ դժբախտ է ոչ միայն և ոչ այնքան սիրաատեն զավակին կորցնելու պատճառով, այլ թերևս շատ ավելի նրա համար, որ չի կարող արդարության հասնել: Օսմանյան արդարադատության պաշտոնյաները արհամարհում են նրա վիշտը, չեն ընդունում հրեա վաճառականների վկայությունը, օսմանյան պետության օրենքների համաձայն այլադավանի վկայությունն առ ոչինչ էր համարվում, մի բան, որ ավելի մեծ հնարավորություն էր տալիս պետական պաշտոնյաներին հաշտելու, հարստահարելու երկրի այլադավան քաղաքացիներին:

Գժվար չէ նկատել, որ այստեղ պաշտպանելով հրեա կնոջ դատը, Քյումուրճյանը խոսում է նաև իր ճնշված հայրենակիցների անունից: Սրա ապացույցն է շափազանց խոստով «օձատիպ» էպիտետը («Նլցուք յօձատիպ տաճկաց աշխարհի»), որով նա բնութագրում է ողջ օսմանյան բռնապետությունը:

Այս ու նման բնութագրումները և նկարագրությունները ընթերցողին որոշակի պատկերացում են տալիս XVII դարի Թուրքիայում տիրող կարգերի,

³ Տե՛ս «նույնոյ Երեմիայի շարագրեալ ստանալորս, վասն վերստին խաչատաակութեան հրկից» (Մատենադարան, ձեռագիր № 7880, թերթ 17ա—18բ) և «Այլ իմն բան հրէի կնոջն Քլբային» (Մատենադարան, ձեռագիր № 1675, թերթ 272ա—273բ):

հպատակ ժողովուրդների կյանքի հանգամանքների մասին: Արանում է Քյոմուրճյանի այս պոեմի պատմական արժեքը:

Պոեմը հորինված է մի շատ հետաքրքիր՝ դրարարի, բարբառի, թուրքերենի և որոշ տեղերում, նույնիսկ, կրրայերենի խառնուրդ ունեցող լեզվով, որը շատ մոտ էր պոլսահայ գաղութի այն ժամանակվա խոսակցական լեզվին:

Ուշադրով է նաև պոեմի գրելաձևը: Այստեղ ևս, ինչպես Քյոմուրճյանի մի շարք այլ երկերում, կարծես միաձուլվել են երկու ոճական սիստեմներ: Այնտեղ, որտեղ խոսում են հերոսները՝ ժողովրդի ներկայացուցիչները, ասկա է ժողովրդական պատկերավոր, հյութեղ, կյանքով լիցուն բառն ու բանը, խմատուն դարձվածքը, անկաշկանդ տրամախոսությունը: Գրա լավագույն նմուշներն են Մրգատաչի մոր անեծքը Տիմոչի հասցեին, Տիմոչի նամակն իր կորուրը և այլն: Բավական զգալի տեղ գրավող այս հատվածները գեղարվեստորեն բացում են հերոսների հոգեկան աշխարհը, ապրումներն ու խոհերը, հոգերանություններն ու բնավորությունները, բնութագրում են նրանց կենցաղն ու միջավայրը:

Հետաքրքիր է, որ պոեմում, ինչպես Քյոմուրճյանի մի շարք առերում, ողբերում և զանձերում, բնարական հատվածները մեծ մասամբ հիշեցնում են ժողովրդական երգերը և հորինված են այդ երգերին հատուկ գեղարվեստական հնարաններով, պատկերներով, համեմատություններով, սիմվոլիկ այլարանություններով: Օրինակ.

Վա՛յ ինձ դատրիկ իմ, բազրիկ ու շիրին,
Ասուն ու խօսուն ձագուկ իմ նարին,
Որսացօղբ աղուտք խլեալ գրեղ տարին,
Շնրաժին լինիս, ժպրմ աննաւուտ:

Պոեմի այն հատվածներում, որտեղ հերոսներն են խոսում, Քյոմուրճյանը կարողանում է նրանց հոգերանությանը, բնավորությանը, կենցաղին ու միջավայրին համապատասխանող պատկերներ ու համեմատություններ ստեղծել: Օրինակ որքան տխրական է, որ տար ու պողառատ երկրի բնակիչ կինը իր մատաղահաս դստեր առևանգումը համեմատում է ծառից խակ պտուղը պոկելու հետ. «Զպտուղս ի ծառ է խակակութ հատին»: Կամ XVII դարի հայի հոգերանության համար որքան բնորոշ է, որ շարիքի գերազույն աստիճանը նույնացվում է օտար հրոսակների արշավանքների, նրանց կատարած խժղժուլությունների հետ.

Գու ինձ Թամուր Լանկ, ճէլալի եղեր.
Եագի ու թաթար և գալլ մարդակեր:

Մինչդեռ բուն հեղինակային խոսքն անհամեմատ ավելի քիչ է պատկերավոր, ավելի քիչ է անմիջական:

Պոեմի կառուցվածքի ամբողջականությունը խանդարում են մեծ տեղ բռնող կրոնա-գավանարանական դատողությունները:

Սակայն շնայած այս թերություններին, Քյոմուրճյանին, այնուամենայնիվ, հաջողվել է իրական գեպըն այնպես ներկայացնել, որ այն հնչի որպես գեղարվեստական ստեղծագործություն, որ բնդհանրացման ուժով հուզի ու մտածել առ բնթերցողին:

Քրիստոսը ի մի անտիպ պոեմը է նաև հայկական միջնադարյան պոեզիայի մեջ պոեմի ժանրի զարգացման բնթացքն ուսումնասիրելու տեսակետից:

Մեր միջնադարյան գրականության մեջ պոեմները, կամ պոեմանման երկարաշունչ էպիկական երկերը ամենից ավելի պատմա-բաղաբական թեմատիկա են ունեցել: Գրանցում կամ գովերգվել է առանձին գորավարների ու հերոսների գործունեությունը, կամ պատկերվել է հայ ժողովրդի այս կամ այն հասվածին պատահած որևէ աղետալի իրադարձություն: Այնուհետև գալիս են ալլաբանական պոեմները, որոնք ըստ էության աշխարհիկ լինելով կամ արտաբնապես են կրոնական ձև ունեցել, կամ հեղինակներն են աշխատել, որ դրանք կրոնական իմաստով հասկացվեն:

Իսկական աշխարհիկ սիրային երկ է «Յովհաննէս և Աշա» ժողովրդական պոեմը:

Քրիստոսը ի մի անտիպ պոեմը սյուժեի տեսակետից շատ ավելի վերջինին է նման, թեև ըստ էության ունի նաև պատմա-բաղաբական նպատակ: Այս առումով էլ այս երկն իր ուրույն տեղն ունի հայ միջնադարյան պոեմների շարքում:



Վասն էմէէՖՖի առնաւուս Տիմօյի աւեմէն, որ սիբեաց զաղօիկ մի եւէի Մրգասայ առնու եւ սուրբ խորհրդով քարոզէ նմա զքրիստոս եւ աղօթիկն խոստանայ երբայ ընդ նմա ուր եւ կամէցի մահուկն:

Յիստամպօլ քաղաք զուսար ոմն հրէի,
Որ էր բնակեալ ի գրան Ֆէնէաի.
Յարտաքոյ գրան նոյն Իսկէլէի,
Յեղերբս ծովուն, որ նայի կոչի:
5 էր անդ հաց ի ծախ ի դուն, զոր ասի
Յոյն զաւանութեամբ ազգ ամնաուտաի,
Ասոյց հասակաւ ի մանկական տի,
Որոյ անուն Տիմօյ կոչի:
Սայ տայր հաց ի ծախ ի տունս հրէի
10 Գոլ ծանօթանալ նոյն տալիթայի
Իբրու կատական սիրոյ ազգովի,
Յիրարս լինէին միշտ ի զբրուցի:
Որոչն հրէի արթնացեալ հոգի,

Աղբյուրներ.

A—Չեռագիր՝ 7715, թերթ 67բ—74բ, ժամանակ՝ 1680 թ.:

B—Չեռագիր՝ 8780, թերթ 17բ—30ա, ժամանակ՝ ժԹ դար:

Խորագիր.

A—Անխորագիր

Տարբերակներ

2 A էր՝ չիր: Ֆէնաաի: 3 A քսկալայի: 4 A յեալի: 5 B որ փիս զոր: 7 A ասօգ:

8 A և անուն: Տեմօ: 11 A կատականս: աղասի: 12 B յիրեարս: 13 A հրէյի: B յոգի:

- Վառելով ի սէր յունաց կարբջի,
 15 Խօսին և զմայլին ի սէր աւելի,
 Որ միշտ երթ և եկ ի տունն լինի:
 Իսկ մայր աղջկանն ասէր Տիմօյի,
 Թէ այդքան սէր քոյ, սր ի մեզ վառի,
 Լիջիր հրէայ ի մերս օրինի,
 20 Քեզ զոնքաչ լինիմ, դուստր իմ կին քեզի:
 Ունկն եղեալ և դուստրն մօրն բանի,
 Առաւել հարեալ ի սէր տարփալի,
 Եւ ևս ցՏիմօն խնքն համարձակի,
 Ասէր քեզ լիցիմ և դու իսկ ինձի:
 25 Ճուղաց տայ Տիմօն՝ ա՛յ իմ սիրելի,
 Ոչ որ է լուեալ զայս յաւիտենի,
 Թէ քրիստոնեայ որ հրէայ լինի,
 Զլոյսն փոխարկէ ի գարշ խաւարի:
 Քանզի փռօֆիղայք դուք տեսանողի
 30 Համայնք գրեցին զազկս Մեսիայի,
 Թէ զայ և շանու գրնութիւնս մեր նախնի,
 Մարրեալ սրբեսցէ արեամբ իւր ձրի:
 Տե՛ս զի մինչ ցայսօր ազգն ձեր հայի,
 Ակնարկեալ զալստեանն Մեսիայի,
 35 Մոլորեալ մնացին ի խոր խաւարի,
 Խարեալ սուտ արանցն, կան այլայլելի:
 Լո՛յս է հաւատն իմ փրկչին Յիսուսի,
 Որ ի խաշ նորայ ևս հաւատացի,
 Որ ազգ և ազինք զնայ խոստովանի,
 40 Թագաւորք՝ ւ իշխանք մինչ ցօրըս յայտնի:
 Տե՛ս զի դուք հանուրց եղաք զարշելի,
 Որ ամենայն ազգ նալլաթ տայ ձեզի,
 Դու ինձ խոստացիր զհաւատն Յիսուսի,
 Որ լոյս տուեալ ինձ, տայ և լոյս քեզի:
 45 Լե՛ր դու ինձ այսօր ըստոյզ խոստովան,
 Եզիր դու օրէնս իմ քրիստեան
 Մկրտեալ լիջիր յանուն Յիսուսեան,
 Ես քեզ լինիմ, դու ինձ սիրական:
 Մրգատան սիրով ասէ Տիմօյին,
 50 Թէ բարի ասես զբանդ սխրագին,
 Բայց սակասաւորս որպէս լինիցիմ,
 Ըզմեծ գործդ առնել ևս իմոյս անձին:
 Ազգն իմ զիս սպանէ յոյժ ողորմագին,

14 A ունաց: կարճի: 15 B մայլին փխ զմայլին: 16 B և եկի: 17 A տէմօյին: 19 A յօրինի: 21 A մօրն իւր բանի: 24 A լիցի: 26 B զայդ: 27 A հրայ: 28 B լոյսն: 29 B զասք: 34 A զգալուտան: 36 B արանց: այլայլ(լի): 40 A ՚ւ չիր: մինչև ցօր: 41 B եղէք: 42 B նալլէթ: տան: 45 A ըստոյզ՝ չիր: 46 B յօրէնս իմօմ Քրիստիայն: 47 A անուն: 50 A բաննդ այդ: 52 A զմեզ: իմուժս:

- և քեզ ոչ թողուն կենացրդ բաժին,
 55 Ոչ զքեզ ոչ թողուն և ոչ զանձրն իմ,
 Այլ կորուստ աշամիկ զինչ օգուտ լիցին:
 Ասէ և Տիմօն զիւր Մրգատային,
 Միայն զսիրտդ ուղղեալ քոյ ըստեղծողին,
 Գու ինձ խոստացիր զհաւատն Յիսուսին,
 60 Հնարեսցուք երթալ ի յերկիր բարին:
 Ասէ Մրգատան թէ որպէս փոխշիմք,
 Որ ի ճանապարհն ումեր շահնդիպիմք,
 Գուցէ զկնի մեր խնդրողք անկանին,
 Յետինքն շար լինի մեր, քան զառաջինն:
 65 Մինչ յայս խորհրդեան հանապաղ կային,
 և օրբստօրէ ի սէր յաւելուին,
 Փախչելոյ հնարս աննել փութային,
 Դիպուկ ժամ ուրուք օգնելոյ մնային:
 Աորնիմեր միմեանց ի սեզան նըստէին,
 70 Ի դէմս դրոշմեալ զնշան սուրբ խաչին,
 Զոմանս կատականս, զոմանս ստուգէին
 Գովելով Տիմօն զհաւատն Յիսուսին:
 Աչք Մրգատային յերես Տիմօյին,
 Անթարթ և անդադար յիրարս դիտէին,
 75 Ճօճալ ճապկրտալքն՝ Մրգատային,
 Հողեհան լինէր խիստ խիստ Տիմօյին:

**Վասն քրի բարեկամաց Տիմօյին, որ կային ի յԱլտի,
որ ուման ասեն թէ եղբայրն է:**

- Տիմօյին մարդ կայր ի երկիրն Ուլահ,
 Ոմանք մեծամեծ գործ իշխանութեան,
 Գրեալ Տիմօյին ճեստիլդ յայդր ունայն,
 80 Պանդուխտ յաշխարհիդ յերկիր Տաճկաստան:
 Այլք գան առ ի մեզ մարմնով զուարճանան,
 Հոգով ցնծացեալ յերկիրս քրիստիայն,
 Զկենցաղըս վայելին ի հանգստութեան,
 Կցորդ լեալ փառաց մեր վայելչութեան:
 85 Գու ևս առ մեզ իբրև զոմն օտարական,
 Կաս որպէս թէ ոչ ի մտաց մեր սահման,
 Օտարք և բնտանիք մեզ ծանօթացան,
 Կարօտ մեր առ քեզ, դու խորթանման:
 Մի՞թէ չկայ աստ գործ արուեստիդ նման,
 90 Զի՞ցեմք մեք քան քս վարպետիդ նման,

54 A և ոչ զիմ անձին. փխ կենացրդ բաժին: 55 A կենացրդ բաժին փխ և ոչ զան-
 ձրն իմ: 56 B յայամիկ: 57 B իւր: 58 B ուղղեալ քո: 60 A երթալ երթալ: 62 A ճանա-
 պարհ: 64 A յար փխ շար: 65 A խորհրդեն: 66 B աւելուին: 67 A աննելոյ: 69 A սեզան
 նստեցին: 70 A դէմս՝ չիք: 71 A զոմն ստուգէին: B կատանս փխ կատականս: 75 B ճօճել:
 76 A լինէր հողեհան: A ենթավերնագիրքը՝ չիք: 77 B երկիր: 78 A մտեալ փխ: նստիլդ:
 հիս ի երկիր: 81 A առ մեզ: 82 A երկիրս: 85 B իբր: 88 A խորթայնման:

Յարկ մեր հանգստութեան տեղ և պահարան,
 Վայրբոց փոշոտ 'ւ ոչլտտ, բարուց բոյ նման:
 Սթափեաց ի գինւոյդ մանուկ մոլական,
 Զգաստացիր և ե՛լ յերկրէդ Տաճկաստան,
 95 Առ մեզ եկ սրախ բոյ յօժարական,
 Ողջ լիցիս տէրութեամբ ի սոյն արթնութեան»:

**Վասն ողբագին սխուքեան Տիմօյին և գրեթոյ զպատահումնս
 որ յաղջկանէն, առաքելով ի Ռւսիս եղբարց իւրոց**

Հուեալ զայս Տիմօն ի լաց ելանէ,
 Ողբալ գանձագին, խոցոց հառաչէ,
 Ասէ զոր գրեալ են ինձ խիստ արժան է,
 160 Յիմոցս կամ օտար, անձն իմ կարօտ է:
 Զկ ժամ ժամանակ գերիս զի՛նչ առնէ,
 Որ դրստեր հրէին սիրտ իմ հարեալ է,
 Սէր նորա զմարմինս, հոգիս կու մաշէ
 Վա՛յ զգլուխս պատեաց որ ելն անհուն է:
 105 Գրեմ իմքս զխոցոց որ ինձ փորձանք է.
 «Պարոն եղբարցդ իմ ի ազնիւ տոհմէ,
 Պատուեալ գործակալք ի ազատ ազգէ,
 Ոտից ձեր համբոյր ի նուաստէս հասցէ:
 Գիր ձեր մեծութեան քան որ հասեալ է,
 110 Աչք իմ արտասուաց ոչ-զազարեալ է,
 Զինչ որ գրեցիր ինձ այլ աւել է,
 Յանցանք իմ անբախտ 'ւ անգիտութիւն է:
 Երաւ որ զփառս ձեր օտարն վայելէ,
 Հացի է հասեալ, կենօքն ուրախ է,
 115 Հալաւս իմ կեղտոտ աղայ ջրեալայ է,
 Թէ փորովս հացիկ՝ ծեծով, փետով է:
 Թող որ մատունք իմ շրճամարձակէ,
 Գրելս զմեծութեանցդ սիրտ իմ սասանէ,
 Որ մոլական ախտն զիս ըմբռնեալ է,
 120 Ի գուռն մի հրէի կանգնեցուցեալ է:
 Առ այս փորձանաց, որ զիպեալ եղէ,
 Օր աւուր և այն առաւել աճէ,
 Եւ նորայ պտուղն կամ կեանք կամ մահ է,
 Ի երկուցրս մի՞նն լինիլ խիստ մերձ է:
 125 Ի սէր սիրական սիրտ իմ պըրկեալ է,

91 A արկ: ապարան փխ պահարան: 92 B բարուք բոց: 93 A գինւոյ: 94 A սխու-
 տացիր: երկրէտ: B յերկրիդ: A ենթադրե՞նազիրք՝ չիր: 98 A Ողբայ գանձագին ի լաց
 ելանէ: 99 A արժէ: 100 B յիմոցս օտար կամ: 103 A հոգիս, զմար մինս: 105 A իմոցս:
 106 B ի յազնիւ: 107 B ի յազատ: 108 B օտիցդ: 109 B մեծութեանցդ: 112 A անձանք
 փխ յանցանք: 114 B կենօք: 115 A ազտոտ փխ կեղտոտ: B աղա բէպէ է: 117 A մա-
 տունքդ: 120 A գուռ: 124 A ի երկուցրու մերց է: B ի յերկուցրու:

- Որ այժմ և աւելտ ոչ որ լըուեալ է,
 Եւ այն առ զստէր դարչ հըրէի է,
 Չեղ խոստովանիմ, որ մեծ փորձանք է:
 Ազոտը պատկեր է, որ մարդ տեսեալ չէ,
 130 Քաղցըր լեզու է, որ լսելոյ չէ,
 Բարք նազելի է, որ ասելոյ չէ,
 Սէրն է հանց յաղթող, որ պատմելոյ չէ:
 Թէ յաշտ համայնից որ դարչ հըէայ է,
 Չգիտեմ թէ ինձ որ այսպէս, երեւալ է,
 135 Չգիտեմ թէ որպիսի հուր ինձ վառեալ է,
 Առանց շուան՝ և երկաթ զիս պինդ կապեալ է:
 Ո՞րպէս կարացից մեկնիլ ի նմանէ,
 Ո՞րպէս զատեցայց զնորաքն տեսնիլէ,
 Ո՞րզոն մոռացայց զսէրն, որ անհան է,
 140 Որ ճառելոյ չէ, ոչ պատմելոյ է:
 Պատուելի պարոն արդ խրատդ ի՞նչ է,
 Չի եզրօր խրատ յոյժ օգտակար է,
 Չսէր նորա ասեմ, որ հուր բորբոքէ,
 Չկոչումդ քոյ ահա ինձ կրկին վիշտ է:
 145 Թուղթ ձեր կրտսերիդ որ առ ձեզ հասցէ,
 Խրատ ձեր արագ ինձ] ժամանեցէ,
 Չի հանց արարից որպէս հրաման է,
 Այս բան մեծութեանցդ ողջ լիջիք ի Տեառնէ»:

Վասն պատասխանոյ եղբօր Տիմօյին փութով առաքել լիսամպօյ,
 միտքարեալ զնա յուսադրական բանիւ, և բաջալիբէ երթալ ի յՈւլտի,
 տանելով և գաղօթիկ երէին:

- էհասս թուղթըս փութով յերկիր Ուլտհայ,
 150 Եղբօր Տիմօյին, որ անդ էր նայ,
 Լցեալ խնդութեամբ և ուրախանայ,
 Չդարձ թղթին դրէ, որ յօրինակս կայ:
 «Տիմօյ եղբօրդ իմ ողջոյն այս սլասցի,
 Իրդ որ քեզ դիպեալ ի Տեառնէ գիտացի,
 155 Ամօթ չէ մարդոյ, որ փորձանք դիպի,
 Ի հողմոյն շարժեալ ցոյց ինձ ծառ յերկրի,
 Անմեղ՝ և անսրբաւ բեր մարդ մի ինձի,
 Անարատ կենօք՝ և ոչ սէր ի սրբաի,
 Պղտոր է հասակն երիտասարդի,
 160 Թող դարիպ լինօզն կարօտ ամենի,

126 A լսեալ է: 129 A ազոտը որ՝ չիր: 130 A լսելու: 131 A ասելու: 132 A աղթող:
 պատմելու: 133 A աշտ: 134 B այսպէս որ: 135 A չգիտեմ թե ինձ: 136 A երկակ փխ եր-
 կաթ: 137 B մերժիլ փխ մեկնիլ: 138 A նորայն: 139 B սէրն: 140 A ճառելու: պատմե-
 լու: 144 A Չկոչումդ քոյ ոչ կրկին վիշտ է: 147 A Չի հանց որպէս արատից հրաման է:
 148 A բառ փխ բան: մեծութեանդ: A Ենթավերնագիրը՝ չիր: 149 A երկիր: 150 A եզրօ:
 152 A զդարց: օրինակ: 153 A իմոյ: այս՝ չիր: 154 B ի տեառնէ: 156 A շարժեալ:
 157 A անսեղալ: մի՛ չիր: 160 A լինող:

- Թող որ և մատաղ աղջիկ հըրէայն,
 Յաչքս քոյ անկեալ, դեղըն քարշական,
 Հանդէպ աչաց քոց լինի ճոճական,
 Հարեալ սէրն ի սիրտդ յանկարծ տարփական:
- 165 Չեմ ես մեղադիր եղեալ ի յայտ բան,
 Ձի այդ մեծ ոմանց ես հանդիպեալ կան,
 Ես գրեմ թուղթ մերոցդ, որք ի այտըր կան,
 Ձի քեզ օղնեսցեն ի խորհուրդ և ի բան:
 Թէ կարես հընար առնել դալըստեան,
- 170 Բերեալ ընդ քեզ դրամբիշ Մըրդատան,
 Ձի աստ մկըրտեալ առցուք քրիստիան,
 Կարթոն հարսանիս փառօք իստիֆան»:

**Վասն ցուցանելոյ Տիմօյին գրուրքն առ աղջիկն և զօվ: զաւելարին
 Բիսանէից և հարսանիսն իւրեանց**

- Թղթովս այս Տիմօն ևմուտ ցՄրդատան,
 Ասաց աւետիք ինձ այսօր հասան,
- 175 Գիրս այս յեղբօրէս արդ առաքեցան,
 Յաւոցս դեզ դըտին, հընար և դէրման:
 Երթամք ընդ քեզ ի Ուլահ երկրի
 Աշխարհ խնդութեան մէջ քրիստոնէի,
 Ի լսելն գայցեն ընդ առաջ մեզի,
- 180 Պատուեալ մեծարեն ըզքեզ իմքս հոգի:
 Ելցես ի խաւար հրէիցն օրինի,
 Ելցուք յօձատիպ տանկացն աշխարհէ
 Սիրով յարեսցուք յազդ քրիստոնէի,
 Կեանք և օր տեսցուք ընդ քեզ իմս հոգի:
- 185 Մեծ պատրաստութիւն հարսանեաց, հոգի,
 Վասն իմ և սակս քոյ խնդութեան, հոգի,
 Կուսանք քոյ նաժիշտք յունակամ ազգի,
 Կարդ կարդ յօրինին պճնեալ զքեզ, հոգի:
 Քոչին օրիորդք դստերք պարսնի,
- 190 Կոյսք քեզ դարդարիշք բորբըն պօյնարի,
 Կոյսք քեզ քօղարկուք կանայք իշխանի,
 Գահոյք յօրինեն քոյ պառազաստի:
 Քեզ քօղ հարսնութեան սուրբ հարամք օրհնի
 Քեզ դարդ մեծութեան յարթունեաց ձըրի,
- 195 Քեզ պսակ փառաց խաշիւ Տեառնագրի,
 Տանին ի մատրան սուրբ եկեղեցի:
 Քահանայն աշովն տայ դձևող յիմ աջի,

161 A հրան: B և՛ չիք: 162 A աչս: 163 A լինիլն: 165 A այս փխ 'ի յայտ: 166 A և փխ ես: 167 B 'ի յայտըր: 168 B և բան: 170 B բամբիշ: A Ենթադիւրեմազերը՝ չիք: 176 A ցաւոց: տարման: 177 B ի յուլահ: 178 B յաշխարհ: 182 A օձատիպ: տանկաց: B աշխարհի: 186 A վասն քոյ խնդութեան ոգի: 187 B քո: 189 A յօրիօրդք: B օրիօրք: 190 A կոյս: դարդարիշ: պօարի: 191 A կոյս: քօղարկողք: 193 A տողը՝ չիք: 194 A աողը՝ չիք: 195 A աողը՝ չիք: 196 A աողը՝ չիք: 197 A ձևող իմ:

- Երթամք ընդառաջ հանդէպ խորանի,
 Դասք դասք նուագին զերդ զարմանալի,
 200 Ուրախ լեր այսօր սուրբ եկեղեցի:
 Զերգս յարմարելով երաժշտական,
 Զսիրով սիրիմն սողոմոնական,
 Գովեն երանեն զհարսդ երանական,
 Ի մէջ աշխարհի քրիստոնէութեան:
 205 Թէ որ զօրէնս քոյին նախնական,
 Մերժեցիր զկրօնն խրայլէլական,
 Սիրեցիր զհաւատ քրիստոնէութեան,
 Բանալով և զձեր երկիրդն հրէական:
 Մանկունք զքեզ գովեն երգովք մեծական,
 210 Մեծութեամբ օրհնել աղերսել փութեան,
 Ընծային սոճկէն զորոջդ կուսութեան,
 Զի հրէայդ եմուտ ի հօտ քրիստոսեան:
 Յաւէտ յիշատակ քոյ մեծի անուան,
 Մասքն քոյ բարւոյ զործոյդ լրբութեան,
 215 Երգի և ճառի յաշխարհ ամենայն,
 Ոգւոյտ մեծութեան, սրբախդ յարիութեան:

**Վասն յօծարելոյ արտի աղօլեանն և ի գիշերի պատրասեալ քալիզայիւ.
 սանիկ կերպարանաւ փախեան:**

- Լուեալ Մրգատան ասէր Տիմօյին,
 Այս եղև շնորհօքն իմ Մեսիային,
 Որպէս նայ հաճի կամք իւր եղիցին,
 220 Զի՞նչ և խնդրեսցուք ի կատար լիցին:
 Ես քեզ ի յանձէն և դու արարչին,
 Ճանապարհ բացէ ի յաջողութիւն,
 Արայ մեզ թապտիր ծածուկ խորհրդին,
 Զի զնացեալ հասցուք յուսացեալ բարին:
 225 Տնծացաւ հոգին պապայ Տիմօյին,
 Հայէր ի գետին, խնդայր իւր մըտին,
 Տրցէր և շօվէր զփրնճեր պէխերին,
 Զոր սոյնդոր շանայր հեշտ երևէին:
 Ժըպտեալ երեսին պէխերն ի ձեռին,
 230 Ասէր գոհութիւն յերկնից արքային,
 Որ ետ քեզ շնորհս ըստ մեր սուրբ սրտին,
 Լիցուք պատրաստիլ ի ճանապարհին:
 Եմուտ ի խորհուրդ ընդ նաւալարին,

199 B երգ: 202 B ըզսիրա(թ) սիրմն: 205 B Թէ դու որ զօրէնս: 206 A զկրօն:
 208 B զերկիրդն: 209 B երաժքշտական փխ երգովք մեծական: 210 A մեծաձայն օրհնեն:
 211 A կուսական: 212 B հրէայք: 214 B քո բարի: 216 A սրտի: B արութեան: A Ենթա-
 վերնագիրք՝ չիք: 221 B քեզի յանձին: 226 A խնդար: 227 A ցցեր և շօվեր և շօվէր
 զփնճերն: 228 A ջանար: 230 A գոհութիւն, գոհութիւն երկնից: 231 A սուրբ սուրբ:

- Դու պատրաստ կացիր ի սոյն գիշերին,
 235 Զի յայլ տեղ երթամք մեք երկու հողի,
 Փութով գնացուք մինչ լոյս չլինի:
 Ի նոյն գիշերին այնք պատրաստեցին,
 Նրստան ի նաւին ի ծով վարեցին,
 Ի էլուպ սուլթան իսկէլէն ելին,
 240 Անդ և գերիվարսըն պատրաստի գրտին:
 Գերծեաց ըզգլխակըն Մրդատային,
 Եղ թաթար սամուր դայլփախն ի գլխին,
 Սեաւ փուշի պատեալ ի պարանոցին,
 Եւ կապուտակ ձորձ էարկ զանձամբ նորին:
 245 Փոքրիկ կառք մի այլ պատրաստեալ էին,
 Թալիգայ անուամբ յայլ լեզու կոչին.
 Ետ անդ զՄրդատայն նոյն կերպափոխին,
 Որպէս թէ պարոն կամ պարոնորդին:
 Ել ի կառն նստաւ յօժարեալ ուխտին,
 250 Բայց արտօսըն յաշայ առու հոսէին,
 Զի այս որպէս դործ նմա հանդիպին,
 Ընդ օտարան երթալ ի օտարութիւն:
 Աղէ՛, սակս յուսոյ անմահ արքային,
 Որ կապեալ ի սիրան առթիւ Տիմօյին,
 255 Ա՛յ Ադունեայ՝ ձեռք քոյ օղնեցին,
 Ասէր լեր դու ընդ մեզ ի ճանապարհին:
 Մըրնթաց ձիովքն, որ ճամփայ մըտին,
 Աւորքք ինչ ըզգէա Տօնայիւս անցին,
 Տաճիկ աշխարհի ըզսինօսըն անցին,
 260 Ի քրիստոնէից երկիրն հասին:
 Պարոնըն կանգնեալ կնքահայր նոցին,
 Մեծաւ հանդիսիւ գնայ մկրտեցին,
 Փառօք հարսանեօք իստիֆանեցին,
 Զնոր հարսն և փեսայն օժտօք ոտձկեցին:
 265 Կուր դու զկատարածն հրէից ազգին,
 Թէ զինչ գործեցաւ ի նոյն սահմանին,
 Հրէայքն առ ի մայրն հարցմունք կլին,
 Տեսին զի ողբայր և լայր դառնապին:
 Նստէր դրացեօք և իւր ազգայնօք,
 270 Կալական պառօք, դուսան եղերերդօք,
 Անիծեն զՏիմօն պէսպէս նզովիւք,
 Զօր ծննդեան նորա յոյժ անարդանօք:

235 A այլ: 238 A նստան ի նաւ: 239 A սկուլան: B ի էլուպ: 240 B պատրաստ
 242 A թաթար՝ չիք: գայլփախն: 243 A փուշի: 244 B արկ զանձամբըն: 247 A ԵՄ գնոյ
 Մրդատան ի նոյն կերպափոխին: 249 B որ տին փխ ուխտին: 250 A աշայն: 251 A
 նորա փխ նմա: 252 A օտար: B ի յօտարութիւն: 254 A կաթեալ փխ կապեալ: 255 A
 այ աղօնայի: 258 A զգեա տանային անձին: 259 B յաշխարհաց: 260 B յերկիրն: 261 B
 ի կնքահայր: 264 B զփեսայն: 270 A եզերքօք: B 265—272 տողերը՝ չիք:

- Յոյժ անմխիթար լային կոծելով,
 Լերամբ և դաշտով ծովով ցամաքով,
 275 Երկնով և երկրով, ձորով, սարերով,
 Քան զողրն Երեմիա առաւել ցաւով:
 Հրէաքն ի խնդիր որ ի մայրն եկին,
 Ասեն իզուր է կոծ ձեր տրամադին,
 Ելցուք ի սահմանս ծովեզերին,
 280 Յուզեսցուք ի տունս յունական յազգին:
 Ազդ առնեն իսկոյն զայս զայմախամին,
 Որ նայ յանձնէ առ մէծ սուպաշին,
 Զվրեժխնդիր լեալ պոստանճի պաշին,
 Խուզեն որոնեն ի նոյն սահմանին:
 285 Չեղէ գտանել զհետս նոցին,
 Թէ բնդ որ ճանապարհ անցեալ գնացին,
 Զբազումս հորոմս կալեալ կապեցին,
 Զախճկան տանողք գուցէ գտանիցին:
 Զտանող նաւաւարն հազիւ որ գտին,
 290 Որ զնոսայ էհան եզր քաղաքին.
 Կալան ի բանտի և ի տանջանս ավին,
 Իսկ նայ ի ուրաստ ի նոցանէ լինի:
 Ասի փոռո զինուք որ առ իմս եկին,
 Զինքեանս տաճիկ սուրհանդակս էին,
 295 Երկեայ դառնագոյն տեսչինէ նոցին,
 Ասեալ և հանէ յեզր քաղաքին:
 Թողին գնայ ի բաց և զայս խեղդէցին.
 Ի համաքն ազգաց ի դրան ֆէնատին,
 Եւ տեղեկացան զտանել Տիմօյին,
 300 Զմուտ և զել ունելն բնդ դատէր հրէին:
 Բողորեն ազգօք ի հրապարակի,
 Ասեն չէ եզեալ այս ի սոյն թախտի,
 Մեզ հարկատուացս մեծ թազաւորի,
 Անիրաւութեանս այսմով լուռ լիցի:
 305 Կոտորիմք ազգօք ի սուր սուսերի,
 Թէ աղջիկն մեր ի գիւտ ոչ լիցի,
 Թող բաժին լիցի այն տաճիկ ազգի,
 Եւ մի թշնամեաց մեր քրիստոնէի:
 Լուսն զայս ազինք ի սոյն քաղաքի,
 310 Նախատինքս տան հրէից ազգի,
 Մոռացան այսու քզկէլտի կէլտին:
 Արդ զաղջիկ ջհտին բնդ առնաւուտի,
 Տարու առնաւուտրն զաղջիկն ջհտի,
 Հեծայց երիվար առնել քզկընի,
 315 Հոտոմք փէսաւէրք եղեն հրէյի,

В 273—294 առկերբ՝ չիք: 287 А հոտոմա: կապ էին: 294 А սուրհանդակաւին: В 295—300 առկերբ՝ չիք: 303 В հարկատուաց: 307 В լինի: 311 В այնու այսու: 313 В ջհտա: 314 В հեծայց յերիվար: 315 В փեսաւէր:

- Փէսայ առնաւուտ և յոյնք խընամի.
 Ասեն ի փողոցս ՚ւ ի հրապարակի
 Զկնի և երեսն հըրէից ազգի,
 Նեղեն և վշտանան չաղագս սոյն իրի,
 320 Բողոքեն ի դուռս շատ բոնաւորի:
 Աղաչեն բազում և դրամս տան,
 Պօստանճի պաշիէն առեալ հրաման
 Յղեալ դոմն ճարտար Պաքիր կոշական,
 Զի վաղվաղեսցէ երթալ զհետ նոցայն:
 325 Պէքիր խասէփին և զօրք ընդ նմայն,
 Եւ հրէայք ոմանք յերիվար հեծան,
 Փութասալաց ձիովք զհետ նոցա եղան:
 Իրրև իջեանն երկրորդում իջան,
 Գիշերն զերիվարս նոցա գողացան
 330 Ելին ընդ առաւօտն տեսեալ ափշեցան,
 Զբողոր գաւառն յուզեալ շրջեցան,
 Զձիսն ոչ գտին, զգործօղսն չիմացան:
 Որք էին զգործսն զայն արարեալ,
 Կամ զպատրաստութիւն վաղուց հողացեալ,
 335 Կամ թէ յիրաւի գողաց գողացեալ,
 Կամ թէ շինկեանեաց, որ անդ մերձ օթեալ:
 Այս պակաս անուամբ ի յետքս դարձեալ,
 Եւ ամօթ ցնոսա յոյժ առաւելեալ,
 Եւ ևս զի անհաշտ խռովութիւն ծընեալ,
 340 Առ ՚ի մէջ հրէից և յունաց յորդեալ:
 Երգս նոր յարմարեալ ի փողոցս ոգեալ,
 Մեծաց և փոքրունց զեզզեղեալ ձայնեալ,
 Քան զսուտ նէպիին բանքն առաւելեալ,
 Զարմանք համայնից յունաց պարծանք լեալ:
 345 Նախատինք հրէից արդ յուրովեցան,
 Կատակեն զնայ ալլազգիք համայն,
 Զի զգործ Տիմօյին առնեն արտասան,
 Զսիրտ քաջութեան և զսէր աղջրկան:
 Մեծամեծք փոքունք գոլ ի զարմացան,
 350 Վասն առնաւուտի սրտի մեծութեան,
 Զերկոցունց սիրոյ զեզուն լիութեան,
 Խորհրդոց հնարուցն և պատրաստութեան,
 Զնան ի գիշերի պատրաստի կալման
 Զերիվարս ի յեզր ծովուն ի դիպման,
 355 Զաղջիկըն փոխեալ ի կերպըս մանկան,

316 A առնաւուտք, և՛ չիք: 322 B առնել: 323 B (ա) էքիր փխ պաքիր: 324 B վաղվաղեսցեն: 328 B յիջեան յերկրորդ: 333 A որք ևն 334: B պատրաստութիւն: 335 A իրաւի, գողոց: 336 A մերձի օգեալ: B չինկե անէից: 337 A յետս: 340 A որդեալ: 341 A յողեալ: 342 A փոքուց: ձանեալ: 343 A նապին: 346 A չես փխ զնայ: B համան: 347 A Տիմօին: յարտասան: 348 A զիրաւ և՛ չիք: 349 B փոքումք: 354 B գերիվարն է յեզոյ:

Զփախուածն արագեալ և ի յաջողման:
 Ըզդիպուած բախտին շնորհատրական,
 Պահըն բարիոք և պատշաճական,
 Ժամըն գերագոյն, օրն ուղղադիպման,
 360 Խորհուրդքըն խոհեմ ի սէր զուարթական:
 Ի լեւտուած եղին զյոյսն պընդական,
 ԶՅիսուս կոչեցին իւրեանց օգնական,
 Առին ախոյեան զխաչըն Տէրունեան,
 Ուղեկից բարի՝ զՀրեշտակ պահապան:

**Վասն անգոսնելոյ երէից զմայր աղօլիանն, քէ խորհրդով Բոյ կորեաւ
 դուստրն Բո: Իսկ նայ դառնագին կոծով ողբայր ի մէջ Բաղաբիս
 անիծելով գառնաւուսն:**

365 Զմայրըն հըրէայր դատապարտէին,
 Թէ իրս որ եղև գիտութեամբ քոյին,
 Եւ նայ բողոքէր զխեղճըս իւրոյ սրբտին,
 Թէ զհուրս որ ունիմ բաւ է իմս անձին,
 Դուք այլ մի խոցէք վշտիւք սաստկագին,
 370 Սպանեցէք դուք զիս՝ հալալ արիւն իմ,
 Ով է որ զպտուղ իւրոյ արգանդին,
 Կորուսցէ այլոց ի յօտարութիւն,
 Աշացս իմ հանդէպ զդուտըն իմ խլեցին,
 Թէպէտ կենդանի որպէս մահ ցուցին,
 375 Ի տանէս իմոյ տարագիր հանին,
 Սուղ ինձ պաշարեաց, ցաւ անհնարին:
 Հաւատացս հանին քրիստոնեայ առին,
 Նախատինք արար մէջ համայն ազգին,
 Պետութիւնք տաճկաց չէ որ գտանին,
 380 Այլ յօտար երկիր մէջ քրիստոնէին:
 Առին ի գրկէս զդուտըն իմ ծաղկածին,
 Արին անգաւակ զմայրս լալագին,
 Զպտուղս ի ծառէս խակակուլի հատին,
 Զլոյս իմ շիջուցին, տոճնս խաւար ածին:
 385 Կեանքս իմ եղև այսօր մէջ աղջամղջին,
 Ոչ հանդիստ աւուր, ոչ ի գիշերին,
 Այրիմ, տոշորիմ դստերս կարօտին,
 Տապիմ, տագնապիմ ի բոց կրակին:
 Հայրըն զոր լքսէ, ի՞նչ տաց պատասխան,
 390 Ի յօտար աշխարհ կգիպտոսական,
 Զնախատինս կըրէ յայլազգեաց համայն,
 Սակս մեր աշխատէ, գոյս ըստացական:

356 A յարգեալ: 358 A պահէ: 363 A ախոյին: տրունեան: A Ենթափերնագիրք՝ չիր:
 365 B դատապարտ էին: 367 A նայ և: B նա: իւր: 370 A Սպանէր: յարիւն: 371 A յար-
 գանդին: 373 A զդուտըս: 377 A Հաւացոցս: քրիստոնեա: 380 B քրիստիանին: 381 A
 զդուտը: 385 A կեանք: B կեանքս եղև: մէ փխ մէջ: 390 A յաշխարհ: 391 A այլազ-
 գայ համար: 392 A աշխատի:

- Ունէար փափար, թէ տացուք նշան,
 Ըստ արժանւոյ անուան հօրքն մեծութեան,
 395 Ըստ օրինի մերոյ խօսել հրէական,
 Ի պատշաճ ժամու սպասել հարսնութեան:
 Միամօր դստերս իմ վաշիշական,
 Փեսայացուցանել զոմն արպի մուսայն,
 Սպասէի խնդալ ի տեսս նոցայն,
 400 Սակս մեր ժառանգորդ լինել յաւիտեան:
 Դառնայ և խօսի՝ առ առնաւուան այն.
 Ով ետ քեզ խրատ՝ այր ամբարտաւան,
 Գող և հարամի ազգ ժրպրհական,
 Իշխեցիր խրչիլ զդուարն իմ պատուական:
 405 Մի՞ թէ վասըն քոյ զաւակ հասուցի,
 Յղացեալ երկնեցայ և ծնայ յաշխարհի,
 Բազկօքրս բարձի՝ ի զիրգ զբզեցի,
 Կաթամբ դիուցեալ խեղեփ սրնուցի,
 Շողոյն փախուցեալ, ցրտոյն ծածկեցի,
 410 Ի ջրոյն պատրաստեալ ի հրոյն պահեցի,
 Օտար՝ ի բնտանեաց նազելի ցուցի,
 Մի՞ թէ քեզ համար դայն պատրաստեցի:
 Դու դիս անզաւակ արեր յաշխարհի,
 Անզաւակ լինի մայրդ ողորմելի,
 415 Զարտասուս աշացս հեղէր ի յերկրի,
 Քոյ մօր արտասուան ոչ դադարեսցի:
 Զի՞նչ քեզ արժանի դուարն իմ նազելի,
 Զի՞նչ քեզ գարշելոյդ խաթուն պատշաճի,
 Նարրն և նազուկս, քեզ անոյխտանի,
 420 Ըէլալիդ Տիմօ, ժալըմ առնաւուտ:
 Յո՞ր ազգէ էիր այրդ անիծելի,
 Յո՞ր յերկրէ էիր դու նրզովնի,
 Ո՞ր շարեաց ծնունդն, ծնօղդ եղկելի,
 Ո՞վ Բնլ շարաթոյն, ժալըմ առնաւուտ:
 425 Դու նինուէացի և բարեկացի,
 Կորուստ վառնեցեր զփառս իմ ի յերկրի,
 Ի բնէ թշնամի մերս Բսրայէլի,
 Մամածէր ամալէկ, ժալըմ առնաւուտ:
 Դու ինձ Եգիպտեայ փարաւոն եղեր,
 430 Զանդրանիկ դուարրն իմ տարազիր հաներ,
 Միայն միամօրս մխիթարս հատեր,
 Մէլլուն ֆարաօն, ժալըմ առնաւուտ:

394 A արժանոյ: 397 A վաշիշական: 398 A փեսայացնել: արփի: 404 A զդուար
 պատուական: 406 A և՛ չիր: B աշխարհի: 409 A ցրտոյ: 410 A ՚ի ջրոյ: 414 B մարդ
 415 B յաշացս: 416 A մօրն: B բու: արտասուքն: 417 A դուար: 418 A քեզ չիր B
 գարշելոյդ: 419 A նազբու: 420 A ճալալիթ տիմօ: 423 A ծնունդ, ծնունդ քո եղկելի:
 424 A շարաթոն: 425 B նինուէացի: 427 A թշնամիք: 428 B Մամածէր: 430 A դուար:
 432 A Մելլուն:

- Դու Անդիոզոս տանց իմաց եղեր,
 Զինդութիւնքս մեր ի սուգ փոխեցեր,
 435 Նախատինք յաւէտ ազգիս մեր թողեր:
 Ա՛նդիհօհօս, ժալքմ աննաւում:
 Դու ինձ Քամուր-կանկ, ճէլալի եղեր,
 Եսդի և թաթար և գալլ մարդակեր,
 Զիմ դուստրս ի ծոցոյս յանկարծ խըլեցեր,
 440 Ա՛ շունի փէոս, ժալքմ աննաւում:
 Դու Խտամպօլու հուր նրմանեցեր,
 Յազգէ յազգ սրբտիս կրակ վառեցեր,
 Յախտեան հոգոյս կըսկիծ դեղեցեր,
 Ա՛ դիավօլօս ժալքմ աննաւում:
 445 Դու ժանտ և ժպիրհ ազգ ես դարշելի,
 Զի՞նչ քեզ միարան իսրայէլացի,
 Դու անխառն ընդ մեզ պիղծ սամարացի,
 Շամսի քրիստիան, ժալքմ աննաւում:
 Դու ես անօրէն և շարեաց որդի,
 450 Կեղտոտ ճիկէրճի և պիղծ ալլազգի,
 Ծանակ աննաւում՝ տմարդ յեապանի,
 Էնխէր էմատօյ, ժալքմ աննաւում:
 Դու դարդատեսիլ, վատ քան զղալմուխի,
 Սըղըրթմաճ ճօպան տրրազ շէպանի,
 455 Պատառօղ դազան, գզող անճոռնի,
 Գըզեցեր զդուստրն իմ, ժալքմ աննաւում:
 Երկաթ քեզ լայնիս, որ ի վիզդ անցանի,
 Շղթայ քոյ զոտորդ ընդ փայազանտ դերի,
 Գէշ պէխեր պօշնախ ու տօպրուճալի,
 460 Անսուրբ՝ և անթլփատ ժալքմ աննաւում:
 Վա՛յ ինձ դստրիկ իմ քաղցրիկ ու շիրին,
 Ասուն ու խօսուն ձագուկ իմ նարին,
 Որսացօղք ազուար խլեալ զքեզ տարին,
 Շնքաժին լինիս, ժալքմ աննաւում:

Չաան Երբալոյ մօրքն յէսէէնէ սայ ազուհալ քազաւորին և կարծեցեալ
 վաճառական կապանօք սարան յէսիէնէ. և ի չգսանել վկայից
 անխորթաւ լեալ: Մեռաւ մայր աղօղկանն անգ:

- 465 Լայր և լացն էր նոր այս ողբերգօր
 Աղջկօք և հարսնօք, լալական պառվօք,
 Շօղոս ու ժանկոտ կախարդ շնծերօք,

433 A անտրոս: 436 B անդիօհօս: 442 A վազեօեմ: 443 B յախանն: հոգւոյս:
 445 B ազգիս փխ ազգ ես: 446 A տողը ոչ իր տեղում: 450 A ճիկարճի և պիղծ: 451 B
 եապանի: 453 A զղալմուխ: 454 A շապանի: 455 B գերօղ փխ գզող: 456 A զդուստր:
 457 B ի շիր: 458 A փայզան: B քո: դոտօք: 461 B ու՛ շիր: 462 B ձագուկ: 463 A աքուար:
 խլեալք: A Ենթազերնաղիբը՝ շիր: 466 A և՛ շիր: բաւօք: 467 A կախարդ:

- Անիծեն զդուտրն և զայրն աննաւուս:
 Շնծեր պիղծ պառաւք մօրրն խրատ տան,
 470 Եթ ի յէտրէնէ, արզ տուր ի արքայն,
 Ժալում տուր կանչէ, լաց եղիր լալկան,
 Միթէ մատնհացես զտանօղքն ի յատեան:
 Գրնաց յէտրէնէ մայրրն աղջրկան,
 Երես արդուհալ ողորմ ողբական,
 475 Ասաց թագաւորրն տեսցէ զայմախամքն,
 Զով կամի քէրամլին եղև հրրաման:
 Զոմանս վաճառականս յէտրէնէ տարին,
 Մատուցին հանդէպ մեծ զայմախամին,
 Կանգնեցաւ ի դատ խիստ կինն ջհտին,
 480 Ասէ զիմ աղջիկն սոքա կորուսին:
 Ասէ զայմախամն ո՛ր է քոյ վրկայն,
 Զի շեմ քնդունէր զքոյ հրէայ վրկայն,
 Որ ազօք եղեալ էք դուք դաւաճան,
 Հաստատուն տաճիկ կամիմ զձեր վկայն:
 485 Երբ շատին վկայ, յամօթի հարան,
 Հոռոմ պազիրկեանքն բզրոզոր կալան,
 Է թէ յիստամբօլ ալ վաճառական,
 Սապէս պուխտանից մուտ 'ւ էլ շկարեան:
 Սիրտք բոնակալաց յայսմիկ հաճեցան,
 490 Ոմքն հայցուածովք, ոմն տինարական,
 Կոչեալ զայմախամն բզնոյն պազիրկեանքն,
 Հուճեաթ գրեալ վասն այնց անմեղ ի նոյն բան:
 Լսողքն ամեն այսմ եղեն հաւան,
 Եղջիր բրբիստեանց առ այս բարձրացան,
 495 Ըզկէլտի Կէլտիին բզվրէժն առան,
 Աննաւուտք ցրնոսա յարածամ ցրնծան:
 Ալ ի դուրս շեղաւ մայրրն աղջրկան,
 Եւ ոչ ի յերես բոնակալացն այն,
 Մախեալ զստացւածս և զինչս խրոյ տան,
 500 Չեկեալ ի քաղաքս միւս ևս անգամ:
 Սոյն տապօվ տապէր ի խոր կսկծման,
 Վա՛յ և եղուկ տայր անձինն անխափան,
 Նոյն ցաւօքն հեծէր ողորմ ողբական,
 Յետ ոչ շատ աւուրց մեռաւ խղճական:

470 A տարանայ: B արքայն: 471 A ժուլում: B լաց ւ եղեր: 473 A էտրանայ:
 477 A էտրանայ: 479 A ի դուս: 482 A գչիմ փխ գի շեմ: B գբո: 483 A է փխ էք: 484
 A մաաճիկ: 486 A Հոռով: 487 A Եթե խտամալօլ: 488 B բուխտանից փխ պուխտանից:
 489 A այսմիկ: 492 B Հօճէթ: 494 B Եղջուր: 499 B զստացուածս: 500 A ևս՝ շիք: 502
 A անձին: 503 B ցաւօք: 504 A աւուրց:

A. S. СААКЯН

НЕОПУБЛИКОВАННАЯ ПОЭМА ИЕРЕМИИ
ЧЕЛЕБИ КЕОМУРДЖЯНА
(Р е з ю м е)

В рукописях Матенадарана №№ 8780 и 7715 сохранилось сочинение видного общественно-политического деятеля и писателя XVII века Иеремии Челеби Кеомурджяна «О булочнике-арнауте Тимо, влюбленном в еврейскую девушку Мргату», которое по своим литературным особенностям приближается к жанру поэмы.

Сюжет поэмы, построенный на художественном воплощении истории любви албанского юноши к еврейской девушке, отличается реалистическими чертами и драматизмом. Поэт выдвигает вопрос о возможности любви между молодыми людьми, принадлежащими к различному вероисповеданию, и о победе этой любви, несмотря на религиозные преграды. В поэме Кеомурджяна высказываются также мысли, направленные против ассимиляторской политики Османской империи.

Поэма Кеомурджяна издается впервые. Текст ее составлен на основе сличения двух вышеуказанных рукописей Матенадарана.

A. S. SAHAKIAN

UN POEME INEDIT DE JEREMIE TCHELEBI KEOMOURDJIAN

«Timo, le boulanger arnaute, amoureux de Mrhat, fille juive» tel est le titre de l'oeuvre de Jérémie Tchélébi Kéomourdjian, homme politique et écrivain distingué du XVII^e siècle. oeuvre qui, par ses qualités littéraires, se rapproche du poème et qui se trouve dans les manuscrits 8780 et 7715 du Maténadaran.

Le sujet: l'amour d'un jeune albanais pour une fille juive est traité avec beaucoup de réalisme et de puissance dramatique.

Le poète préconise l'union de jeunes de religions adverses et fait triompher l'amour par delà les entraves de la croyance.

Kéomourdjian accuse également la politique d'assimilation ottomane.

Le poème est publié pour la première fois. Le texte a pu être reconstitué à l'aide des deux manuscrits précités.

